



Անրի Տիրամանոր  
գերեզմանուն



Սբ. Երուսաղեմուն



Սնորք  
ԱՍՏՎԱՉԱՌԻՒ

# ՄՈՒՐԲ ՄԱՐԴԱՄ

## ԱՍՏՎԱԾՄԱԾՆԻ

### ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ



(բարեփոխված չորրորդ հրատարակություն)

Ծարադրեց Մեկրուժան Բարաջանյանը



ԵՐԵՎԱՆ - 2005

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը մեր բոլորի քննույց Մոր՝ Մարիամ Աստվածածնի հրաշագործ վերափոխման մասին է, վկայաբանված առաքելահիմք եկեղեցու ավանդություններով:

Գրքում զետեղված են գովաբանական տաղեր ու շարականներ, ձոնված մեր եկեղեցու սուրբ հայրերի կողմից: Ու որպես լրացում այդ ամենի գրքում զետեղել ենք նաև մեր ժամանակներում կատարված բազմարիվ վկայություններ, որոնք ապացուց են Մարիամ Աստվածածնի բարեխոսության գորության մասին:

## ՑԱՆԿ

Հետադարձ հայացք	3
Ավանդություն և հավաստիություն	8
Երկու տաղ	16
Չարի որոնք	23
Ուշացած խոստովանություն	26
Վերջին վկայություն	27



Տպագրված է «ԱՏԱՄՊԱ» ՍՊԸ տպագրատանը.  
Երևան Գ. Ա. Բ-1 բաղ. Բաֆֆու 99

## ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

Այս փոքրիկ գրքույկը հայ ընթերցողին ենք մատուցում երկու նպատակով. նախ՝ որպեսզի մեր ժողովրդի մեջ նորոգվի Մարիամ Աստվածածնի ճշմարիտ նկարագիրը, որն անաստվածության տարիներին ստանան փորձեց աղճատել ու ջնջել մեր սրտերից՝ քանդելով և վերացնելով Տիրամորը վերաբերող եկեղեցիներն ու մատուռները, և երկրորդ՝ որպեսզի վերականգնվող սրբատեղերով ու նորոգվող հավատով հայ ժողովուրդը նորից սկսի Աստվածածնի բարեխոսությունը խնդրել: Քանզի այն ամենասպորադն ընդունելին է մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջ, ինչը ևս մեկ անգամ հիշեցրեց հենց ինքը՝ Տիրամայրը, 1988-ի երկրաշարժ-եղենից մի քանի օր անց, անձեռակերտ նկարների տեսքով հայտնվելով Հայաստանի տարբեր վայրերի բնակարանների պատերին՝ ի մխիթարություն և ի հուսագրություն մեր վշտաբեկ հոգիների: Ով հավատում և ուզում էր մխիթարվել, գնում ու մխիթարվում էր երկնային մեր Մոր՝ այցով: Բայց, ավա՛ղ, հայոց ազգը այդ հրաշքի հանդեպ իրեն հեթանոսի նման դրսենորեց՝ մեծ մասամբ մնալով անհավատ և անտարբեր, երբեմն էլ նույնիսկ՝ արձանագերլով թշնամաբար ու ծաղրանքով:

Նմանատիպ այցելություններ եղել են նաև մուսուլմանական երկներում՝ Եղիպատում, Իրանում. իսկ Միրիայում, 1988 թվականի Սպիտակի երկրաշար-

ժից անմիջապես առաջ, մի բարեպաշտ հայորդութանը կախված Տիրամոր սրբապատկերից անուշակուու բժշկարար յուղ է հոսել: Բայց այդ այլակրոն պետություններում, ի տարբերություն մեզ, առավել երկուղած վերաբերմունք են ցուցաբերել, քանզի համակացել են, որ զրանք Աստծո հայտնի նշաններն են մարդոց որդիների մեջ: Իսկ մենք՝ աշխարհում առաջին քրիստոնյա ազգի ներկայացուցիչներս, որքա՛ն անմերելի թժեամտությամբ վարվեցինք մեր երկնային Մոր՝ գեղի մեզ կարկառած գորովագութ ձեռքերի հանդեպ: Թող Աստված ողորմի հայորդիներիս: Իսկ աստվածահրաշ այդ այցելությունից որպես հուշ մնացել է ընդամենը մեկ լուսանկար, այն էլ կատարված հանգուցյալ կաթողիկոս Վազգեն Ա-ի ցուցումով (տե՛ս կազմի երկրորդ երեսը):

Մի փաստ ևս հիշեցնեմ, որն այն օրերին շատերի համար գուցեց մնաց աննկատելի, բայց նորից հաստատում է Աստվածածնի մայրական սերը հայոց ազգի հանդեպ:

Հատերս ենք հիշում Գյումրի քաղաքի հետերկրաշարժյան դժնդակ ու սրտաճմլիկ պատկերը, բայց քչերս ուշադրություն դարձրինք հետեւյալ զարմանահրաշ փաստին: Նախկին կենտրոնական հրապարակը հիշենք, որի աջ և ձախ կողմերում վեր էին խոյանում երկու սքանչելի կոթողներ: Առաջինը՝ Մարիամ Աստվածածնի եկեղեցին, որը կոչվում է նաև «Յոթ վերք», երկրորդը՝ «Ամենափրկիչ» եկեղեցին էր.

գրում եմ «էր», որովհետեւ այն համարյա հիմնահատակ վկաց էր կրկաշարժից, իսկ Տիրամոր եկեղեցին, որը նրանից ընդամենը մի հարյուր մետրի վրա էր, մնաց անսասան: Զգիտեմ՝ ով ինչ զգացումներ ապրեց այդ օրերին, բայց երկրաշարժից մի քանի օր անց, Գյումրի այցելելով, երբ առաջին անգամ մտա Հրաշքով կանգուն մնացած այդ եկեղեցին, ինձ այնպես թվաց, թե ոտք դրեցի փրկության տապան, որտեղ Աստծո կենդանի ու միսիթարիչ Հոգու անտես ներկայությունը կար:

Իսկ երբ սրտի կողին այցելեցի Ամենափրկչի փլատակներին ու տեսա խորանի տակի տասներկու առաքյալների որմնանկարները, մեջտեղում՝ Տիրամորը՝ Մանկան հետ, - որոնք տասնյակ տարիներ ցեխածածկի տակ թաքցրել էին մարդկանց աչքերից որպես ավելորդություն, - հետեւյալ տը-խուրը խորհուրդը հասկացած այս եկեղեցին ավելի նոր էր, ամուր ու վեհաշուրք, բայց քանի որ ապականվել էր աշխարհի մաղձով՝ վերածվելով համերգասրահի, իսկ Սուրբ Խորանը՝ սրբազնով մարմնական ցանկագործիով պարերի եռքով, այդ կառույցից Տիրոջ Հոգին հեռացել էր:

Իսկ երբ քիչ անց տեսա այդ եկեղեցու գետնատարած մետաղյա խաչը, ծակծկված տարբեր տրամաչափերի փամփուշտներից առջացած անցքերով, կարծես մայրական վիրափոր սրտի նման, որին անգիտաբար խոցոտել են հենց իր իսկ հարազատ զավակները՝

- 5 -

քրիստոնյա համարվող հայ ազգի մոլորված հետնորդները, հասկացա, որ մենք մեր անօրենություններով մեր իսկ գլխին Աստծո բարկության ամպեր ենք դիզել: Ի լրումն այս ամենի, տեղաբնակները պատմեցին, որ աթեկամի մոլեգնության տարիներին, երբ ուղեցել են փակել այն ու վերածել փայտի պահեստի, որպես զգուշացում, Տիրոջ Հրեշտակը երեք անգամ գիշերով այցելել ու հրեցեն սրով հատել՝ գեն է նետել փականը, հասկացնելով, որ Աստծո տունը պետք չէ փակել մարդկանց առաջ: Բայց քանի որ այս աշխարհի իշխանը՝ սատանան, քարացրել էր մարդկանց սրտերը, նրանք, այդ երկնային այցելությունից ոչ մի դաս չառնելով, ընդամենը որոշում են եկեղեցում պահեստավորված տախտակները զգուշության համար մի այլ տեղ փոխադրել, որպեսզի հաջորդ անգամ դրանք չբռնկվեն կայծակի հարվածից:

Իսկ քանի որ Տիրամոր եկեղեցին անաստվածության տարիներին ծառայել էր Աստծուն և Նրա զավակներին, ապա Տիրոջ Աջը Աստվածածնի բարեխոսությամբ պահպանեց կործանարար երկրաշարժից որպես ստնտու Մոր՝ Աստծուն փափագող հոգիներին սնելու համար:

Հիմա, տարիներ անց, ի լրումն այդ բոլորի, ուզում եմ ևս մի գեաք պատմել, որը պատահել է 1988թ. գեկտեմբերին, երկրաշարժից հետո:

Մեր ազգի գաժան փորձության առաջին շաբաթներն էին: Երևանի հիվանդանոցները լեփ-լեցուն էին

- 6 -

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ

Իսկ Մարիամ Աստվածածնի վերափոխման մասին ավանդությունը, որ հիմա կկարգաք, քաղված է եկեղեցու «Հայսմավուրք» կոչող գրքից, որի մեջ տոնացույցի հաջորդականությամբ զետեղված են հավատի համար նահատակվածների վարքերն ու վկայարանությունները:

Բայց մինչ կուենք բուն նյութի շարադրությունը, ասենք, որ առաքելահիմք եկեղեցու հավատացյալները, ի տարբերություն աղանդավորների, ավանդությանը վերաբերում են որպես չգրված ավետարանի, որի հավաստիացումը մեր սրտերում կատարում է այն նույն Հոգին, Որը Պողոս առաքյալի միջոցով առել է. «Գովում եմ ձեզ, որ Հիշում եք ինձ ամեն բանում և պահում եք ավանդած բաները, ինչպես որ ավանդեցի ձեզ» (Ա. Կորնթ. 11. 2):

Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը, որը ժողովուրդը կոչում է նաև «Խաղողօրհնեք», կատարվում է ըստ Հայ Առաքելական եկեղեցու տոնացույցի, ամեն տարի օգոստոս ամսվա 15-ին ամենամոտ կիրակիներից մեկում: Իսկ «Խաղողօրհնեք» է կոչվում, որովհետեւ հայերը մինչև իրենց այգու խաղողը այդ օրը չօրհնվեր, չէին ճաշակում: Եվ տոնակատարության ժամանակ իրենց այգու բերքից եկեղեցի էին տանում և Աստծո օրհնանքը ստանում, միաժամանակ

- 8 -

աղետյալներով ու խեղանդամներով: Այդ օրերին հավատացյալների փոքրիկ խոմքով այցելում էինք նրանց, աշխատելով ինչ-որ բանով օգտակար լինել և միաժամանակ Աստծո խոսքով միսիթարել: Ահա այդ ժամանակ էր, որ հանդիպեցինք խստասիրտ ու աթեխտական ոգով կարծրացած մի ծերունու, որը բոլոր այցելությունների ընթացքում ամեն կերպ խոչընդոտում ու ծաղրանքով հակառակվում էր մեզ, երբ լսում էր Աստծո գոյության մասին: Եվ իմանալով, որ Մասիսի շրջանի գյուղերից մեկում Տիրամոր անձեռակերտ պատկերն է երևացել, հիվանդանոցից հատուկ գնացել էր այդ տունը, որպեսզի վերջնականապես հաստատվի իր անաստված համոզմունքի մեջ: Պատկերը տեսնելուց հետո էլ չէր հավատացել ու թուանը հրել էր առաջ, որ գնա ու մատը քսի նկարին, որպեսի համոզվի, որ մարդու ձեռքով է նկարված: Թոռն էլ, միամտորեն մոտենալով, մատը քսել է դժանկարին ու... ձեռքը սարսափահար հետ քաշելով՝ ճացել. «Պապի՛, վառում է մատս...»: Այս իրողությունը պատմեց այդ նույն ծերունին, (որը, ի տարբերություն նախորդ այցելությունների ժամանակ մեր հանդեպ դրսերած անբարյացկամության, այս անգամ հարգալից ակնածանքով էր մեզ դիմավորել) և հրաժեշտի վերջում զղջացողի խոստովանությամբ ավելացրեց. «Մեզ յոթանասուն տարի խաբե՛լ են, խաբե՛լ, էտ անաստվածները...»:

- 7 -

բաժին հանելով չուներներին, քանզի հիշում էին Աստծո խոսքերը. «Տփեք և պիտի տրիթ» և «Երանելի է տալը, քան վերցնելը»: Մեր եկեղեցու հայրերի կողմից Սարդամ Աստվածածնի Վերափոխման տոնը հիշատակվում է դեռ հինգերորդ դարից, որի համառոտ պատմությունը հետեւյան է:

Մարիամ Աստվածածնի մահից մեկ ամիս առաջ նրան է այցելում է Գաբրիել Հրեշտակը, որն առաջինն էր Հիսուսի ծննդյան ավետիսը տվել ու, երկրպագելով Տիրամորը, ասում է. «Ուրախ եղի՛ր, կանանց մեջ բերկրյալդ, որովհետև քեզ կանչում է մեր Արքիչը և քո Միածին Որդին», և տալիս է նրան դրախտի բրաբիոնից հյուսված մի պսակ: Եվ ինչպես ավանդությունն է պատմում, «Մարիամը բերկրեց ու հրճվեց հոգով, քանի որ իր սիրելի Որդու մոտ պիտի վերադառնար»: Լսելով ավետիսը՝ Տիրամայրը բարձրանում է Զիթենյաց լեռը աղոթելու, որտեղից երկինք էր համբարձվել իր սիրասուն Որդին: Ճանապարհին բոլոր ծառերն ու տունկերը խոնարհելով երկրպագությունն էին անում իրենց Արարչի Մորը:

Ամենաօրհնյալ Կույսը աղոթքից հետո գնում է երեք օր շրջելու այն տեղերը, որոնք հարազատ էին իր Որդուն: Ավանդությունը նաև պատմում է, որ աղոթքներից ու երկրպագություններից հետո Կույս Մարիամի գեմքը ճառագում էր երկնային անիմանալի լույսով, ինչպես Մովսես մարգարեինը մոտ, երբ նա իջավ Սինա լեռից Աստծո ներկայության մեջ քառա-

- 9 -

սուն օր մնալուց հետո:

Աստվածածինը, շրջագայությունից վերադառնալով, կանչում է բոլոր ազգականներին ու բարեպաշտ կանանց, ցույց է տալիս դրախտի բրաբիոնի պսակը, որը երկնային անիմանալի լույսով ողողված՝ դրախտային բուրմունք էր տարածում, և հայտնում բոլորին, որ չուտով ինքը աչքերը այստեղ փակելու է վերջին անգամ, որպեսզի երկնքում բացի ու իր Միածին Լույս երեսը տեսնի: Այդ ժամանակ վերադառնում է նաև քարոզության մեկնած Հովհաննես առաքյալը: Սրան էլ հայտնելով իր մոտագուտ մահվան մասին, խընդում է, որ իր համար պատարագ մատուցի՝ վերջին անգամ սուրբ Հաղորդությունը ընդունելու համար:

Աքանչելի էր և այն, որ չուտով Սուրբ Հոգով զորությամբ մեկ առ մեկ հայտնվում են նաև մյուս առաքյալները Տիրոջ այն խոսքի համաձայն, թե՝ «Ուր որ մարմինն է, այնտեղ էլ կհավաքվեն արծիվները» (Ղուկ. 17. 37): Բնդունելով Սուրբ Հաղորդությունը՝ բոլորը միասին գնում են Տիրամոր տուն:

Այնտեղ առաքյալներն ու մոտիկ հարազատները շատ են տրտմում և լաց լինում մոտալուտ բաժանման համար, քանզի Աստվածածնի ներկայությունից բոլորն իրենց Տիրոջ կարոտն էին առնում ու միաթարգում: Երբ բոլոր կանթեղները վառեցին ու Կույս Մարիամը արգեն պատրաստ պառկած էր մահճում, այդ պահին Հովհաննես առաքյալը վերցնե-

- 10 -

լով նոճու փայտից մի ողորկ տախտակ և տալով Աստվածամորը, ասում է. «Մայր, տո՛ւր մեզ քո դեմքի պատկերը որպես հիշատակ»: Տիրամայրը, վերցնելով այն, տեառնագրում է (խաչակնքում է) և, իր լույս դեմքին հաղելով, թրջում աղոթքի արցունքներով. միաժամանակ խնդրում է, որ դրա միջոցով նաև բժշկություններ լինեն զանազան հիվանդություններով, մանավանդ բորոտությամբ տառապողների համար: Նույն պահին անյութ ու լուսեղեն մի ամպ է գոյանում, որտեղից խաչանման լույս է կաթում սրբուհու վրա, և մի ձայն լսվում երկնքից. «Ուզածդ պիտի լինի՛, Մա՛յր իմ»: Եվ Տիրամայրը Հովհաննեսին է հանձնում անձեռագործ ու կենդանագրված պատկերը: (Տարակլուսանքով չզարմանանք այս իրողության վրա, որովհետև նման բան եղել է նաև հայոց Արքար թագավորի բժշկության ժամանակ, երբ Հիսուսը նրան ուղարկեց իր դեմքի անձեռագերտ վարչամակը):

Ապա Տիրամայրը, հորդորելով ամենքին, ասում է. «Արդ գո՛ւք, գուստուրեր վերին երլուսաղեմի, լո՛ւսո որդիներ և հավատի ծնունդներ, քաջալերվեցե՛ք ձեր հույսը եղող Քրիստոսով, զգաստացե՛ք ձեր կյանքում սատանայի պատրանքներից, որ ամեն օր մարտնչում է Աստծո ծառաների դեմ, մի՛ թուլացե՛ք ձեր ամենօրյա աղոթքներում, և Աստծո շնորհով պահպանված կլինեք»:

Ամբողջ գիշեր բոլորը աղոթքով ու սաղմոսերգու-

թյուններով են անցկացնում, իսկ առավոտյան դեմ տունը հանկարծ լցվում է երկնային մի պայծառ լույսով՝ խիստ փախ պատճառելով ամենքին. ու հենց այդ պահին էլ երանելի Կույսը զվարթ երեսով ավանդում է իր սրբանայլ հոգին՝ Միածին Որդու ձեռքերի մեջ: Բոլոր ներկաները տեսնում են նրա մարմնից զատկով լուսեղեն հոգու պայծառությունը և ալշում կատարվածից: Ականատես առաքյալները զարմացած հարցնում են Տիրոջը. «Ո՞վ կարող է Քո անարատ մոր պայծառ հոգուն նմանվել»: Տերը պատասխանում է. «Բոլոր մարդկանց հոգիները ի սկզբանէ այդպես պայծառ ստեղծեցի, ճիշտ նման մորս հոգուն, որ ցույց տվեցի ձեզ, բայց մեղքը սևացնում և ապականում է այն»:

Իսկ սրբերի հիշատակարանը՝ «Հայսմավուրքը» պատմում է մի անհավատալի հրաշքի մասին: Սուրբ Կույսի մարմինը, որը երկնային անուշահոտություն էր տարածում շուրջը ու որն արդեն առանց հոգու էր, հանկարծ սկսում է խսուե՝ ասելով. «Հիշի՛ր ինձ Տեր, որ գոգուությամբ պահեցի քեզանից ինձ տըրպած կուղության գանձը»: Եվ Տերը պատասխանում է. «Քեզ պիտի՛ չժողնեմ, ով իմ գանձիս գանձարան Մայր, մարդեղության առաջականություն»:

Եվ Հիսուսը վերանում է դեպի երկինք՝ տանելով իր հետ սիրելի մոր թանկագին հոգին:

Աստվածածնի անշնչացած մարմինը պատանելով ու դնելով նախապես պատրաստված դագաղում և

- 12 -

իրենց ուսերին վերցնելով՝ առաքյալները, տանում հանգչեցնում են Գեթսեմանիում պատրաստված գերեզմանի մեջ, ամբողջ ճանապարհին այն ուղեկցելով սաղմոսներով և օրհներգություններով։ Հուղարկավորության պահին հրեաները կատաղորեն հարձակվում են սրբուհի Կույսի դագաղի վրա՝ ցանկանալով արգելել թագումը։ Բայց այն դժբախտի ձեռքերը, որը առաջինը դիպավ դագաղին, Տիրոջ հրեշտակը կարեց դրանք հրեղեն սրով, իսկ մնացածները կուրությամբ զարկվեցին։

Ներկաները խիստ ահարեկվեցին այդ հրաշքից, հասկանալով, որ Աստծո բարկությունն է գործել, զղջումով ապաշխարեցին իրենց անմիտ արարքի համար։ Առաքյաները Տիրոջ նման, Որը բժշկեց իրեն բռնող ծառայի կտրված ականջը, նույնպես աղոթքով խնդրեցին Աստծուն, և բոլորը բժշկվեցին կուրությունից, իսկ Կույսի դագաղին ձեռք մեկնող քաշանայի՝ Սոփոնիայի թերոք մնացին կտրված իր հանդգնության պատճառով։

Տիրամոր գերեզման այցելողները երեք օր շարունակ, երկնային լույսով ողողված էին տեսնում այն, լսում հրեշտակների փառաբանության քաղցրավուր երգեր և առնում դրախտի բուրմունք։

Իսկ վերափոխման պահը «Հայումավուրքը»-ը նկարագրում է այսպես. «Երեք օր հետո, չորրորդ օրվա առավոտյան, անմարմին գորքի մի բանակ իջակ երկնքից, իրեն առաջնորդ ունենալով մեր Տեր Հիսուս

- 13 -

Քրիստոսին, Որը լուսափայլ ամպով կանգնեց սուրբ Կույսի գերեզմանի վերեւում։ Տիրոջ հրամանով կնքված գերեզմանից, առանց խախտելու տապանը, հրեշտակները վերցնում են Աստվածածնի մարմինը և տանում վեր՝ դեպի ամպը, իր Միածնի մոտ։ Ու Տերը, միավորելով Մոր մարմինը նրա լուսակերպ հոգու հետ, վերանում է դեպի երկինք ու նստեցնում իր փառքի աթոռի աջ կողմում»։

Սիրելի՝ ընթերցող, այն, ինչ որ նկարագրվեց, ու դու կարդացիր, վեր է ու անհաս մեր բանական մտքին, բայց միևնույն է, պատվենք լուռ երկյուղածությամբ, քանզի Տիրոջ համար ոչ մի անհնարին բան չկա:

Դրանից հետո այլևս ոչ ոք գերեզմանի վրա չլսեց հրեշտակների երգը, որովհետեւ Կույս Աստվածածինը լիովին վերափոխվել էր երկնային ու անանց փառքի համար։

Առաքյաներից մեկը՝ Բարթողոմեոսը, որը ներկա չէր եղել Աստվածածնի ննջումին, շուտով վերադառնում է Խորասանից և, իմանալով եղածի մասին, լաց է լինում ու վշտանում, որ արժանի չեղավ Աստվածածնի վերջին տեսությանը։ Ու քաջ հավատալով, որ անհնար է Տիրամոր մարմինը մյուսների նման ապականվի, խնդրում է առաքյաներին գերեզմանը բացեն, որ ինքն էլ վերջին անգամ տեսնի Տիրամոր լույս երեսը ու գոնե դրանով միմիթարքի։ Առաքյաները տեղի տալով նրա թախանձանքներին, բացում

- 14 -

են տապանը և, ի զարմանս իրենց, այն գտնում են դատարկ, քանզի սուրբ Կույսի մարմինի վերափոխման խորհուրդը դեռևս ծածկված էր իրենցից։

Մինչ նրանք տարակուսած ու տիրամած այդ առեղծվածի լուծումն էին փնտրում, հանկարծ վերեկից մի ձայն են լսում, որն ասում էր. «Երանելի մարմնի համար մի՛ անհանգստացեք, որովհետեւ այն իր Արարիչն ու իր Որդին երկինք փոխադրեց, իսկ նրա պատկերով տախտակը տփե՛ք Բարթողոմեոսին, որպեսզի նրանով միմիթարքի ու իր հետ տանի այն երկիրը, ուր պիտի գնա քարոզելու Ավետարանը»։ Լսելով ձայնը ու իմանալով եղածը՝ բոլորը գոհություն են տալիս և օրհնաբանելով փառաբանում Աստծուն։

Որպես տեղեկություն, ընթերցողին ասենք, որ Աստվածամոր պատկերը բերվում է Հայաստան, որտեղ և քարոզում է Տիրոջ առաքյալը նախորդ առաքյալի՝ Թաղեսուի նահատակությունից հետո։ Նա սկզբում բնակվում է Անձեւաց գավառում, որտեղ իր ձեռքով հաստատում է սուրբ Կույսի անունով մի եկեղեցի ու իր հետ բերած պատկերը դնում այնտեղ։ Այնուհետև կառուցում է կուսանոց ու մի վանք, որն ի պատիվ Տիրամոր՝ անվանվում է «Հոգեաց վանք»։ Այն շուտով վերածվում է ուխտավայր-աբբատեղի, որն առաջինն էր Հայաստան աշխարհում. քանզի ըստ Տիրամոր խնդրածի, նրա պատկերի միջոցով բժշկվում էին բազմաթիվ դիվահարներ։

Իսկ հայոց մատենագիրները մեզ տեղեկացնում են, որ Ներսես Մեծ հայրապետը այդ տեղում հիվանդանոց է կառուցել տալիս, և հաստատում Պատկերի տոնը, որն այժմ կոչվում է Վերափոխման տոն։ Բայց, ավա՛ղ, դարեր հետո Աստվածամոր պատկերի հետքը կորսվում է։

Այս սքանչելի պատմության վերջում. «Հայումավուրք»-ը մեզ հաղորդում է նաև հետեւյալ տեղեկությունները. «Երբ սուրբ Կույսը երուսաղեմի տաճարից դուրս բերվեց Հովսեփի հետ նշանվելու՝ 14 տարեկան էր, իսկ երբ ծնվեց Հիսուսը՝ 15 տարեկան էր։ Երբ Հիսուսը համբարձվեց երկինք՝ Տիրամայրը 48 տարեկան էր. և ննջեց ի Քրիստոս, ապա վերափոխվեց՝ 60 տարեկան հասակում»։ Ավանդություննը մեզ է հասցըել նաև Տիրամոր արտաքինի նկարագրությունը, ըստ որի սուրբ Կույսը երկայնահասակ էր, սպիտակամարմին ու գեղեցիկ, լեցուն ամեն տեսակ չնորհներով, նման էր իր Միածին Որդուն։



- 16 -

## ԵՐԿՈՒ ՏԱՂ

Ահավասիկ մեղ հասած ավանդության համառոտ շարադրանքը Աստվածամոր վերափոխման վերաբերյալ որը կատարվեց ըստ աստվածային Դավթի սաղմոսի մարգարենության. «Թույլ պիտի չտան, որ սուրբդ ապականություն տեսնի»:

Իսկ Ներսես Լամբրոնային այդ առժիկ ձռնել է այս գողարիկ տաղը.

«Եվ Տեր Հիսուս Քրիստոսը վե՛ր վերցրեց իր ծնողի հոգին մարմնի հետ, ցնծությամբ և ուրախությամբ հանգչեցրեց իր Հոր՝ երկնավոր Թագավորի տաճարում»:

Այնտե՛ղ, ուր հավերժ ցնծություն է և ուրախարարների գեղապարություն:

Այնտե՛ղ, ուր սերովբեների խումբն է, և քերովբեների պարը:

Այնտե՛ղ, ուր բյուրավոր հրեշտակներն ու անդրանիկների եկեղեցին են գտնվում:

Այնտե՛ղ, ուր երկնավորները երգում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տե՛ր զորության, երկինքն ու երկիրը լեցուն է Քո փառքով»:

Աստածամայրը, որ ցանկանում էր տեսնել իր Որդուն Դավթի աթոռի վրա, տեսավ նրան այդ օրը քառաղեմ քերովբեական աթոռի վրա և նրա անվան համար ծունկի եկած երկնավորների ու երկրավորնե-

- 17 -

րի սեռերը:

Աստվածածինը, որ հուսահատության սրով խոցվեց, երբ խաչի վրա տարածվեց իր Միածինը, այսօր նրան տեսավ որպես երկնավոր իշխանությունների և պետությունների գլուխ, նստած՝ Հոր Աջում իբրև երկնային Քահանայապետ՝ իր եկեղեցու քավության համար:

Այսօ՛ր քերովբեները իրենց փառավոր բազուկների վրա կրում են նրան ու այս են հնչեցնում ցնծությամբ. «Օրհնյալ է Տիրոջ փառքը, երբ նա հանգչի նյութեղեն տաճարների մեջ»:

Այսօ՛ր հրեշտակների սուրբ գնդերը առաջ գալով, երգում են օրհնությամբ. «Փա՛ռք Աստծուն բարձրունքներում, երկրին խաղաղություն, մարդկանց հաճություն»:

Այսօ՛ր Գաբրելը իր զորքերով հանդերձ սպասավորում էր սուրբ Կույսին, նրան երկնային դավառը բերելով ու ասելով. «Ուրախ եղի՛ր, բերկրյալդ, քո Միածնի՝ քեզ համար պատրաստած հանգստյան և փառքի համար»:

Այսօ՛ր քերովբեն, հրեղեն սուրը ետ քաշելով, ճանապարհ է բացում Կույսի առաջ, որ նա հպվի կենաց ծառին:

Այսօ՛ր նախահայր Աղամը, նայելով իր դստեր գեղապանձ վայելչությանը, ասում է. «Այս է բոլոր կենդանիների Մայրը»:

- 18 -

Այսօ՛ր նախամայր Եվան կողջագուրվի իր դստեր հետ, որը եղավ նրա երկունքի ու արտմության ավարտն ու սահմանը:

Այսօ՛ր Աբրահամն ու Սառան կդան համբուրելու նրան, որովհետև նրա Զավակով օրհնվեցին նրանց բոլոր սերունդները:

Այսօ՛ր Սովուել տեսնելով Սրբուհուն, ձայնը բարձրացնելով, ասաց. «Ահա՝ Կույսը, որ նշանակում է իմ ոսկե սափորը»: Պիտի՝ կանգնես թագուհի, Թագավորի Աջում, ոսկեհուր հագուստներով:

Այսօ՛ր Սողոմոնը խրախուսում է անմարմին օրիներին և այսպես ուսուցանում. «Ուսկու նման պիտի՝ դարձնեք քեզ, արծաթի կիտվածքով, մինչև Արքան իր գիրկը ընդունի քեզ»:

Այսօ՛ր Եսային բարձրածայն հնչեցնում է. «Դո՛ւ Հեսսեի գավազանից ծլած ծաղիկն ես և Եմանուելը ծնող կույսը»:

Այսօ՛ր Եղեկելը, տեսնելով նրա սլացքը դեպի երկինք, ասում է. «Ա՛յս է այն փակ դուռը, որտեղից մտավ Խորացելի Տեր Աստվածը ու Հայտնվեց երկրի վրա»:

Այսօ՛ր տասներկու առաքյալների գունդը աստվածընկալ մարմնի շուրջը երգում ու ասում է. «Հնդունի՛ր Տե՛ր հանգստյանդ մեջ այս տապանակը՝ Սուրբ Աստվածությանդ անթիծ քնակարանը»:

Այսօ՛ր իմաստուն կույսերը, սպասավորելով Կույսի վերափոխմանը, փարվում են նրա մարմնեղեն տա-

պանակին և ասում. «Երանի՛ քեզ, երանվածդդ ազգերի կողմից»:

Այսօ՛ր Քրիստոսի եկեղեցին տիեզերքի հետ հանդես մտած, մեծ օրվա պատվին երկրավորների լեզուներով ու խնդությամբ վերօրհնում է Աստծո ծնողին:

Այսօ՛ր տաճարի մեջ համախմբվածներս խոնարհվում ենք Տիրոջ Սոր՝ Խսկուհու առջև, որպեսզի նա միջնորդի մեր փրկության համար:

Այսօ՛ր, ապավինելով այդ պատվական օրվան, աղոթենք Սուրբ Աստվածածնի առջև, ասելով.

«Ո՞վ Մայր Աստվածածին Մարիամ, որ հեզ ես ու քաղցրալուր քեզ հուսացողների հանդեավ: Ո՞վ կույսերի պարծանք ու հրեշտակների փառք, որ աշխարհի միակ համարձակ բարեխոսն ես: Ո՞վ բարիների շտեմարան ողորմության համար, որ քո սուրբ ոտքերից հավատքով կախվեցին, քեզ սպասող հանդեար քո առաջ ընկնելով, գթությունդ է հայցում: Դո՛ւ, Սուրբ Կույս, որ Երրորդությանը մերձ կանգնեցիր այսօր, խնդրի՛ր Եկեղեցու համար խաղաղություն և մեզ փրկություն: Դո՛ւ, Տիրուինի, որ համարձակ ես քո Միածին Որդու առաջ, աղաչի՛ր իր արյամբ գնված հոտի համար, որպեսզի նա ամբողջական պահի զանազան անդամներին, իր մարմնի հասակի լրումի համար, որպեսզի եպիսկոպոսները առաջնորդե՛ն, քահանաները քավե՛ն, սարկավագները հուսադրե՛ն, ժառանգավորները դաստիրակվե՛ն, ժողովուրդն ունկդրի: Եկեղեցին

- 19 -

- 20 -

քեզ աղոթում ու քո առջև ընկած աղերսում է. խոնարհվի՛ր և աղաչի՛ր Քո Միածին Որդուն, թագավորներին՝ հանդարտություն, իշխաններին՝ զվարքություն, զինվորներին՝ ապահովություն, քաղաքներին՝ պահպանություն և օգնության միջոց նրանց, ովքեր ունեն զանազան խնամածության հոգաւոր, որպեսզի միաձայն ներգերով, մեկ պարահանդեսով քո տոնը տոնենք, այստեղ՝ անդրանիկների խորանի վրա, ամենասուրբ Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու փառքի համար այժմ և միշտ, հավիտյան հավիտենից. ամեն:

Իսկ Ներսես Շնորհալու շարականը Աստվածածնի վերափոխման առթիվ գովերգում է.

«Այսօ՛ր Գաբրիել հրեշտակապետը եկավ, բերելով բրաբրոնի պսակը հաղթող Կույսին:

Այսօ՛ր կանչեց բոլորին Տիրոջ մոտ, Բարձրյալի տաճարը և Բանի բնակարանը:

Այսօ՛ր Հոգու Հրավերով հավաքվեցին առաքելական դասերը և իմաստուն կույսերը:

Այսօ՛ր Միածին Որդին անմարմին դասերով խոնարհեց դեպի կուսության Մայրը:

Այսօ՛ր ավանդեց փայլակի նման մաքուր հոգին՝ վեր բարձրանալով վեհորեն:

Այսօ՛ր ամփոփեց սրբասնունդ մարմինը՝ հողի տակ ծածկելով անապական դանձը:

Այսօ՛ր Երկնայինների խմբերը պար բռնելով՝

- 21 -

Երգում էին գերեզմանի շուրջը:

Այսօ՛ր նրանց երգակցում էին առաքյալները, կույսերի դասերը ու գովերգում:

Այսօ՛ր մաքուր մարմինը փոխադրվեց զգայուն բնություններից գեալի անիմանալի կայանները:

Այսօ՛ր Երկնային դասերը կցնծան ամենասըրբուհի կույսի Երկինք գնալու համար:

Այսօ՛ր լուսագարդ, Երկնային Տիրամոր պատկերը շնորհվեց իրեւ բժշկության պարզեց:

Այսօ՛ր մենք ևս կուսական տոնի առթիվ ուժ-գընորեն եղանակենք Սուրբ Երրորդության փառքը»:

Հիսուսին կրող սուրբ անոթը սահմանված չէր հողի մեջ մնալու, և հնարավոր չէր, որ ապականություն տեսներ նաև ով Անապականից հզանալով, Անապականը կրեց իր մեջ, այլ Տիրոջ հրամանով տեղափոխվեց իրեն վայել տեղը՝ Սրբություն Սրբոցը, ուր հնաքը՝ Աստված է բնակվում:

Մոռում է ավելացնել, որ Տիրամոր վերափոխումից հետո՝ որպես իրեղեն ապացույցներ ու որպես հիշատակ՝ քրիստոնեական եկեղեցիներին հայտնի են Աստվածածնի գոտին և այն տուփը, որի մեջ պահպել է Տիրամոր գլխաշորը: Այդ մասունքների միջոցով բազմաթիվ հրվանդներ են բժշկվել ու մարդկանց միջից կատաղի դեեր են հալածվել:



## ԶԱՐԻ ՈՐՈՄԸ

Առաքելական շրջանից սկսյալ, Երբ քրիստոն-յաներն իրենց աչքով ու ականջով էին տեսնում ու լսում Տիրամոր շնորհալուր խոսքերը և հաղորդ դառնում Երկնատաք օրհնություններին, Սուրբ Կույսի նկատմամբ կար մեծ սիրո և հարգանքի տուրք, մինչև որ եկեղեցու ներսում սկսվեց զանազան աղանդագորների ու Հերձափառությունների չար որոմը ցանվել: Օրինակ, մի քանի վարդապետներ, հանձին նեստորի, այնքան մոլորվեցին, որ Աստվածածնին սկսեցին կոչել պարզապես «մարդածին», կամ «քրիստոսածին»<sup>†</sup>: Նման դավանաբանական պղծության դեմ եկեղեցին սկսեց պայքար մղել: Եկեղեցին պառակտող նեստորական որոմը այնպես էր տարածվել, որ դրա դեմն առնելու և արմատախիլ անելու համար 431թ. Եփեսոսում գումարվեց Երրորդ տիեզերական ժողովը, որտեղ սուրբ Հայոց բարձր բուռն քննարկումից հետո նզովեցին նեստորին որպես մոլորեցնողի ու վտարեցին եկեղեցուց: Թե՛ այդ և թե՛ ներկայումս կատարվող իրադարձությունները ապացույց են մեկ բանի. որ այս աշխարհի իշխանը՝ սատանան, սարսափելով սարսափում է Աստվածածնից, քանզի նրա

<sup>†</sup> Հերետիկոս նեստորը Աստվածածին բառին հակադրել էր «քրիստոսածին» հասկացությունը, այսինքն՝ քրիստոս ծնած, քրիստոսի ծնող. իսկ քրիստոս նշանակում է օծյալ, օծված, որպեսիք են թագափորները, մարգարեները, քահանաները: Խւատի դուրս է գալիս, որ Տիրամայրը մահկանացուր՝ մարդու ծնող է, այլ ոչ թե Աստծո:

բարեխոսական աղոթքները գորավոր ու անկասելի են հավատքով մոտեցողների համար: Եվ այդ է պատճառը, որ բանսարկուն ամեն տեսակ հնարքներ է բանեցնում, որպեսզի մարդոց որդիների մեջ նսեմացնի կամ իսպառ ջնջի Տիրամոր մասին հիշողությունը: Մինչդեռ շատերս ենք լսել Աստվածածնի բարեխոսական աղոթքների զորության մասին: Ու զուր չէ, որ նրա անունով կոչված շատ եկեղեցներում կատարված հրաշըների ու բշկությունների համար ժողովուրդը դրանք անվանել է Աստվածամոր «Զարխափան» մակղիբով, այսինքն՝ շարի բոլոր տեսակի զորությունները քանդող ու խափանող: Այսպես է կոչվում Արևմտյան Հայաստանում գտնվող Արմաշի Մարիամ Աստվածածնի եկեղեցին, որի մասին պատմում են հետևալ իրողությունը:

Երբ Մեծ եկեղենից հետո հայաթափ էր արվել Արմաշը, գարնան մի օր, կեսպիշերին հանկարծ սկսել են զողանջել այդ եկեղեցու զանգերը: Թուրբ-քերը սարսափահար իրար են անցել, կարծելով թե Հայերը նորից են վերադարձել, ու զինված շրջապատել են եկեղեցին՝ փնտուել ամենուր, բայց ոչինչ չեն հայտնաբերել: Տեղի մոլլան բերել է տպել քրիստոնյաների տոների գիրքը, որտեղից իմացել են, որ այդ օրը Քրիստոսի լույս Հարության գիշերն է, այսինքն՝ Զատիկը, և զանգերի զողանջը նրանց ապացուցել է, որ «գյավուրների» Աստվածը կենդանի Աստված է:

Ասենք նաև, որ քրիստոնեության տարածման ժամանակներում, Երբ Հայոց ազգը դարձավ անդրանիկը մնա-

- 24 -

յած քրիստոնյա ժողովուրդների մեջ, առաջին եկեղեցին, որ կառուցվեց Էջմիածնում, կոչվեց Մարիամ Աստվածածնի անունով, որն այժմ անվանվում է նաև «Մայր տաճար», այսինքն՝ թե՛ բոլոր տաճարների մայր և թե Տիրոջ մայր: Այն արդեն տասնյոթ դար է, որ հանդիսանում է Հայ ազգի սիրու, որը չի դադարել բարախելուց, չնայած բարբարոս ու Հեթանոս ազգերի բռնություններին ու Հալածանքներին, և համոզված ենք, որ կշարունակի բարախել մինչև մեր Տիրոջ երկրորդ գալուստը:

Հետագայում բազմաթիվ եկեղեցիներ ու մատուններ կառուցվեցին Տիրամոր անունով: Միայն Երևանում դրանք մի քանիսն են եղել, որոնցից ամենահայտնին ու բոլորիս հարազատը Նորքի Մարիամ Աստվածածնի հրաշալի եկեղեցին էր, որը կոմունիստ անաստվածների ձեռքով խոնարհվեց: Ուշագրավ է, որ դրանց տապարումից ու դիմակազերծումից հետո առաջինը հենց այդ եկեղեցին սկսվեց կառուցվել ու, փառք Աստծո, իր ավարտին հասավ: Հատկանշական է նաև այն, որ այդ եկեղեցուն զուգահեռ Տիրամոր անունով սկսվեց կառուցվել նաև մեկ ուրիշ եկեղեցի Մալաթիա անունով թաղամասում, որոնք էլ կարծեն դարձան մեր վերածնվող ազգի հոգևոր զարթոնքի առաջին ծիծեռնակները:

Իսկ Երևանում աթեկիցմի տարիներին հրաշըով փրկվեց ու կանգուն մնաց միայն սր. Զորավոր Մարիամ Աստվածածնի գողորդիկ եկեղեցին, որը գտնվում է բարբարոսաբար ոչնչացված եկեղեցիներից (սր. Պողոս-

- 25 -

Պետրոսը՝ կինո Մոսկվայի տեղում, սր. Գրիգոր Լուսավորիչը՝ Զարենցի դպրոցի տեղում, և սր. Կաթողիկե Աստվածածնի եկեղեցու մի մասը՝ Լեզվի ինստիտուտի բակում) ոչ հետու:

## ՈՒԾԱՑԱԾ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսկ Նորքի Մարիամ Աստվածածնի եկեղեցու խոնարհման պատմությունից թող ընթերցողն իմանա հետեւյալ գեղաքը, որը կատարվել է կոմունիստական անաստվածության գմբեկ տարիներին:

Մի ծանոթ տարեց կին պատմեց հետեւալը. «Երբ որպես բուժքույր հերթապահում էի Երևանի հիվանդանոցներից մեկում, մի ծանր հիվանդ երիտասարդի բերեցին, որը արտաքնապես առողջ էր երևում, բայց անհասկանալի մի ցավից անընդհատ գոռում էր ու օգնություն խնդրում: Բժիշկները շատ քննեցին, բայց այդպես էլ ոչինչ չհասկացան, ուստի միայն ցավազրկող գեղեր էին տալիս, որոնք, դարձյալ անհասկանալի պատճառով, չէին օգնում: Ինձ նշանակեցին նրան խնամող: Նստած էի գիշերը նրա անկողնու մոտ. հանկարծ հիվանդս մի պահ ուշքի եկավ ցավերից ու ինձ տեսնելով ասաց. «Քո՞ւր ջան, ինձ փրկությունն չկա, իզուր մի՛ չարչարվեք, Աստված է պատժում ինձ՝ եկեղեցու խաչը գցելուս համար»: Ու այդ գերախարպատմեց, որ ինքը երբ կոմսոմոլ է ընդունվել, նրան,

- 26 -

որպես կոմերիտական առաջադրանք, հանձնարարել են Նորքի Մարիամ Աստվածածնի եկեղեցու խաչը գմբեթից գցել: Ու քանի որ մինչ այդ շատերը հրաժարվել էին այդ անելուց, իրեն նաև փող են խոստանում, որ կարողանա դրանով ամուսնանալ: Ինքն էլ համաձայնվում է: Եվ շարունակեց. «Երբ խաչը գցեցի շատերը մտածում էին, թե՛ որ Աստված կա, ինչո՞ւ այս տղան անպատճի մնաց»: Խոստովանեց, որ ինքն էլ էր այդպես մտածում, բայց երբ հարսանիքի օրը եկավ, ու պատրաստվում էին գնալու հարսի հետեւյալ համար ծոտքի ու ձեռքերի մատներում անհասկանալի ու խիստ ծակոցներ է զգում, որոնք գնալով այնքան են սաստկանում, որ հիվանդանոց են բերում:

Մի քանի վիրահասումով բժիշկները կտրեցին նրա ձեռքերը (որոնցով սուրբ Խաչն էր գետնել), ամեն ինչ արեցին գոյնե կյանքը փրկելու համար, բայց ապարդյո՞ւն: Մի քանի շաբաթ չանցած երիտասարդը մեռավ»:

## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Իսկ այժմ, որպեսզի ընթերցողը համոզվի, որ հավատքով արված Մարիամ Աստվածածնին ուղղած բարեխոսական աղոթքները գործել են նաև անաստվածության տարիներին, կարդանք այս զարմանալի վկայությունը ևս՝ արված Աստծո մի աղախնի միջոցով, որի անունը արդեն ապատուեն կարող ենք գրել, քանզի նա խնդրել էր իր կենդանության ժամանակ

չնշել: Այս քույրը, չնայած իր զառամյալ տարիքին, չէր դադարում աղոթել ու խնդրել Աստվածածնի բարեխոսությունը հայորդիներիս համար:

Քույր Միրանույշը պատմեց հետեւյալը. «Հիսունական թվականներն էին. սիբիրյան տաժանելի աքսորավայրից նոր էինք վերադարձել: Թե՛ այստեղի թշվառությունները կյանքիս օրերը մի դառը մղձավանջի էին վերածել: Հույսիս միակ ճրագը հիսուս Քրիստոսի հանդեպ սերն ու հավատն էր:

Այստե՛ղ, աքսորավայրում, պատահաբար մի ծեր հայի հանդիպեցի, որն իր հետ հրաշքով կարողացել էր Նարեկացու աղոթամատյանը բերել: Շատ խնդրեցի, որ մի քանի օրով տա կարդամ, ու այլևս չէի կարողանում բաժանվել այդ հոգու գանձարանից:

Դերձակուհի էի, և աշխատանքիս դիմաց ընդամենը մի քանի ձու էին տալիս, ես էլ անմիջապես վագում էի խանութ ու փոխում աշակերտական տետրի հետ, որպեսզի գիշերները Նարեկը արտագրեմ լուսնի լույսի տակ, որովհետեւ ճրագի նավթ էլ չունեինք: Ծերունի հայը մի քանի անգամ հետ ուղեց գիշերը, բայց երբ իմացավ, որ արտագրում եմ, Աստված նրա սրտի մեջ զրեց, որ թույլ տա ինձ մոտ մնա մինչեւ վերջացնելս: Ասեմ, որ ես էլ էի շտապում, որովհետեւ խանութում ոչ միշտ էին տեսար ունենում, ու վախճանում էի, որ դրանք կվերջանան ու գործս կիսատ կմնա: (Մեր ժամանակների այդ ձեռագիր աղոթամա-

- 27 -

- 28 -

այանը ինքս եմ տեսել ու կարդացել, ու հավատացնում եմ, որ մարդարտաշար այդ գրվածքը հին ձեռագրերի բուրմունքը ուներ, Քրիստոսի սիրո բուրմունքը, որը հասու է միայն Սուրբ Հոգու լեցունությունն ունեցողին): «Նարեկի մեջ ինձ հատկապես հարազատ էին այն աղոթքները, շարունակեց պատմել քույրը, որոնք վերաբերում էին Տիրամորը, քանզի ինքս էլ ծնվել եմ ծնողիս՝ Աստվածածնին ուղած աղոթքների շնորհիվ. և այդ ուխտով էլ պիտի հանձնվեի Արմաշի եկեղեցուն, բայց եղեռնը մեջ ընկալ ու չիրականացակ մորս ուխտը:

Երբ 1946 թվականին լսեցինք, որ դեպի Հայաստան գաղթ կա, իսկույն ամեն բան ծախեցինք ու եկանք հայրենիք, բայց սովոր ու անաստվածությունը այնքան խիստ էին ու անտառնելի, որ ամեն մեկիս հավատը կարող էր սասանվել, եթե Աստծո անտեսանելի միխթարությունը չլիներ: Ու չգիտեմ թե ինչ հանցանքիս համար Միքիրի անմարդաբնակ գյուղում կրած զրկանքներս կարծես հավատիս վերջին փորձաքարը դարձան ու, խոստովանում եմ, որ մի անգամ տրտնջալով աղոթեցի Տիրոջը, թե ինչո՞ւ թույլ տվեց Հայաստան գանք, որն անաստվածների իշխանության տակ էր: Պատասխանը այնքան անսպասելի ու միխթարիչ էր, որ այլևս չէի նեղվում իմ վիճակից: Տերս ասաց, որ մեզ բերել է Հայաստան որպես հոգեոր վառելափայտ, քանի որ հայորդիների հավա-

ալ սառել է. ուստի այն ջերմացնելու և հավատքի կրակը բորբռքելու համար մեր կարիքը կար:

Աքսորից հետո հավատացյալների փոքրիկ խմբերի հաճախակի ուխտագնացությունները դեպի խոնարհված, առանց սրբության զարդարանքի, այսինքն՝ խաչազրկված, եկեղեցիներն ու սրբատեղերը, կարծես մեր լուռ պայքարի միջոցը գարձան մարտնչող անաստվածության ու սատանայի գեմ, որոնք մահարեկ խորչակի նման ամլացնում էին մարդկանց հոգիները:

Այդպիսի մի օր ներքին մղում ունեցած գնալու նորքի Մարիամ Աստվածածնի եկեղեցին, որից ընդամենը մի կիսաքանդ պատ էր մնացել, ուր և վառում էինք մեր մոմերը ու աղոթում խնդրելով Տիրամոր բարեխսությունն ու օգնությունը:

Երբ մոտեցա սրբավայրին, տեսա մի կին ավելով մաքրություն էր անում: Ինձ տեսնելով՝ դադարեց մաքրելուց և մի քանի բոսե ուշագիր զննելուց հետո սասց. «Այդ գո՞ւ և Տիրամորս աղջիկը»: Ես զարմացա, բայց լուռ մնացի, քանի որ ինքնակոչ մարդարեներ էլ կային այդ ժամանակներում, որոնք մոլորեցնում էին հոգեւոր դաստիրակություն չստացած միամիտ ժողովրդին: Երբ նա տեսավ իմ կասկածոտ վերաբերմունքը, նախ իմ կյանքի մի քանի այնպիսի գրվագներ պատմեց, որը միայն ես ու Աստվածս գիտեինք, իսկ դրանից հետո կասկածու լրիկ փարատելու համար, պատմեց իր մասին հետևալը. «Զգիտեմ ինչու, բայց անարժան ու հետին մե-

դավորիս Աստվածածին Մայրս գեռ փոքր հասակից այցելում էր տեսանելի ձեռով և հրամայում էր գնալ այսինչ կամ այնինչ տեղը, որպեսզի իր պատգամները հաղորդեմ: Երբեմն էլ կանչում էր դաշտ և ցույց էր տալիս զանազան ծաղիկներ ու ասում, թե ինչ հիփանդությունների գեմ են դրանք: Ես էլ հավաքում տալիս էի մորս, որ վաճառի, ու դրանով կարողանանք ապրել այդ սովոր տարիներին: Բայց երբ կոմունիստները սաստկացրին հավատացյալների գեմ հալածանքները, հարազատներիս կանչել էին ու վախեցրել, որ եթե ինձ չարգելն Աստծո անունը տալուց, ապա ամբողջ ընտանիքով Միքիրի կը են: Տուն գալով մերոնք ինձ դամանաբար ծեծեցին ու խստիվ արգելեցին այսուհետեւ Տիրամոր պատգամները փոխանցել: Մի քանի անդամ ծեծ ուտելուց ու մազերս փետքելուց հետո մի օր լացակումած դաշտ գնացի, որտեղ հանդիպում էր Մարիամ Աստվածածնի հետ, ու աղոթքով շատ խնդրեցի, որ էլ ինձ ոչ մի տեղ չուղարկի, որովհետև հալածում ու նեղում են այդ պատճառով: Տիրամայրս լսեց աղոթքս ու պատասխանեց, որ այսուհետեւ միայն բացառիկ դեպքերում ինձ կկանչի ծառայելու:

Երկար տարիներ այդպես էլ եղավ: Ու երեկ նորից երեաց և ասաց, որ գամ երեան ու նորքի իր եկեղեցում իրեն սպասեմ» (այդ աղամինն ապրել էր Հայաստանի գյուղերից մեկում, որի անունը չիմացանք):

Այդ քրոջ հետ շատ բաների մասին զրուցեցինք, որոնց համար հրաման չունեմ պատմելու:

Դրանից հետո շատ չանցած նորից մի անդիմադրելի մղումով բարձրացա Աստվածածնի եկեղեցին: Դեռ չեկ մոտեցել, երբ մի կին վախեցած ու այլայլված գեմքով գուրս վագեց գեմս ու արագ-արագ, մի քանի անդամ կրկնեց. «Չգնա՞ս, չըգնա՞ս, այնտեղ մի կատաղած գիծ են բերել, կարող է քեզ էլ վնասել»: Ես պատասխանեցի, որ Տիրամայրս ինձ հետ է, ինչո՞ւ պետք է վախենամ, ու նրան առջեկցս մի կողմ տանելով, առաջ գնացի: Ու, իսկապես, պատից մի քիչ հեռու, վայրենատեսք ու գգգված մազերով, կիսամերկ մի տղամարդ էր նստել, իսկ նրա հարազատները թաքնվել էին պատի հետեւում ու ահաբեկված ինձ ձեռքով նշան էին անում, որ հեռանամ այնտեղից: Ես, ուշագրություն չգարձնելով, առաջ գնացի ու մոմս վառելով՝ սկսեցի աղոթքս, միաժամանակ այդ հիվանդ դիվահարի համար էլ շատ աղաչեցի Տիրամորս: Ու հանկարծ աղոթքիս պահին զգացի որ մեկը եկավ և անխոս ծնկի իջավ կողքիս: Նայեցի տեսա այդ խելագարն էր: Լուռ ու մունջ լուռմ էր աղոթքս ոչ մի ձայն չէր հանում, զարմանալիորեն խաղաղված ու հանգիստ էր: Աղոթքի ավարտից հետո վեր կացավ, այս ու այն կողմ ցրված հագուստները հավաքեց, գանդաղորեն հագավ ու սուս գնաց իրենց բեռնատարը նստեց:

Ծնողներն ու հարազատները ապշած և ուրախացած, մի քիչ էլ ևս վախենալով մոտեցան նրան և մի քանի հարց տալուց հետո համոզվեցին, որ իսկապես հրաշքով բժշկվել է խելագարությունից: Ապա ուրա-

խությունից հուզված՝ սկսեցին լաց լինել: Ինձ էլ ու-  
զեցին իրենց հետ տանել գյուղ, որ չնորհակալ լինեն  
և մատադ մորթեն, բայց ես հրաժարվելով ասացի, որ  
թող Աստծուն և Տիրամորը չնորհակալ լինեն ու,  
նրանց հրաժեշտալով, ոտքով իջա քաղաք»:

Ահա փորձեցինք ընթերցողին ցույց տալ Աստծո  
անհուն ողորմության, ամենակարողության և Մարի-  
ամ Աստվածածնի բարեխսոսական զորությունը: Քան-  
դի Տիրոջ Մայրը, մարմնով վերափոխվելով և երկինք  
վերցվելով, չի մոռացել իր Որդուն սիրող զավակնե-  
րին և բոլոր նրանց, ովքեր հավատքով իր բարեխո-  
սությունն են խնդրում:

Ստորև, որպես լրացուցիչ տեղեկություն հիշեց-  
նենք Մարիամ Աստվածածնին առնչվող մեր Հայ  
Առաքելական եկեղեցու բոլոր տոների ցանկը.

**1. Ավետման տոն ~ ապրիլի 7-ին (անփոփոխ է):**

**2. Գյուտ տուփի ~ Հոգեգալուստից հետո հինգեր-  
որդ կիրակին:**

**3. Բարեկենդան Սուրբ Աստվածածնի ~ օգոստոսի  
առաջին կիրակին:**

**4. Վերափոխումն Աստվածածնի ~ օգոստոսի 15-ին  
մոտ կիրակին:**

**5. Գյուտ գոտու Սրբուհու Աստվածածնի ~ օգոս-  
տոսի 26-ից սեպտեմբերի 1-ը լնկած կիրակին:**

**6. Հովակիմի և Աննայի (Աստվածածնի ծնողների)  
- Վերափոխումից ինը օր հետո:**

**7. Ծնունդ Սուրբ Կույս Մարիամի ~ սեպտեմբերի**

- 33 -

8-ին (անփոփոխ է):

**8. Հզություն Սուրբ Աստվածածնի մոր՝ Աննայի  
- դեկտեմբերի 9-ին (անփոփոխ է):**

Ու որպես օգնություն հայ հավատացյալին, զետե-  
ղում ենք մի կարճ աղոթք՝ մեր սուրբ Գրիգոր Լուսա-  
վորչի աղոթքներից: Այն ներկայացնում ենք գրաբար  
և աշխարհաբար: Նախընտրելի է աղոթել գրաբար,  
որով առաջին անգամ թարգմանվեց Հայոց Աստվա-  
ծաշունչը:

**Անկանիմք առաջի քո, Սուրբ Աստուածածին,  
եւ աղաչեմք զանարատ Կոյսդ՝ բարեխօսեայ  
վասն անձանց մերոյ եւ աղաչեա զՄիածին Որդիկ  
փրկել զմեզ ի փորձութիւնէ եւ ամենայն վտանգից  
մերոյ: Ամեն:**

(աշխարհաբար թարգմանությամբ)

Քո առջև ենք ընկնում, Սուրբ Աստվածածին, և  
աղաչում ամարատ Կույսիդ՝ բարեխօսիր մեր անձերի  
Համար և աղաչիր Միածին Որդուդ փրկել մեզ  
փորձությունից և մեր բոլոր վտանգներից: Ամեն:

**Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը,  
Աստծո սերը և Սուրբ Հոգու  
հաղորդությունը ձեզ հետ լինեն:**

